

Թիւ 26780  
Մարտ 27, 1980

Հոգեշնորհ

Տ. Վազգէն ծ. Վրդ. Ֆէշիշեան  
Հովհան Ս. Մրրորդութիւն Եկեղեցւոյ  
Նախազահ Ծիական Խորհուրդի  
Թորոնթօ.

Սիրելի Հայր Վազգէն,

Ստացած ենք Մարտ 16, 1980 թուակիր ժեր աեղեկագիրը, որով կը հաղորդէք  
թէ ժեր նախազահութեամբ Փետրուար 17ին գումարուած համայնքիդ ծիական Ժողովին  
մէջ կատարուած է ծիական Խորհուրդի չիրաց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայաց-  
նելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշ-  
տօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ  
ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան ղըկել ծիական Խորհուրդի նորընտիր ղիւանի  
անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծիական Խորհուրդի նոր կազմը, ժեզի եւ ժեր պաշտօնակիցներուն  
կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն  
Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուր-  
դին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ  
Առաջնորդ

Մատաթ Մամուրեան  
Խուպար Թօսունեան  
Պարզեւ Խոնամեան  
Հրաշ Շիշմանեան